# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար տպիչների, պատճենահանող սարքերի վերանորոգման, քարթրիջների լիցքավորման ու վերանորոգման և օդորակիչների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-26/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2026 թվականի ապրիլի 6-ին կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-26/02-1» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2026 թվականի մայիսի 21-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ N 2 հավելվածը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 7.5 և 7.14 կետեր

Պատվիրատու՝ Դատական դեպարտամենտ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**06.04.2026թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՊԻՉՆԵՐԻ, ՊԱՏՃԵՆԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՔԱՐԹՐԻՋՆԵՐԻ ԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ԳՀԾՁԲ-26/02-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «21» «05» 2026թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արևիկ Աբրահամյան Գրիգորի» ԱՁ-ն (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 06.04.2026թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-26/02-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրով սահմանված 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամ առավելագույն գնից 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը.

1.1. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ N 2 հավելվածը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի N 1 հավելվածի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

**Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը՝ 15.04.2026թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում Կատարողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:**

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**

***Դատական դեպարտամենտ***

Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241

Հ/Հ՝ 900011192151

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

**Ղեկավար Ն. Գալստյան**

(ստորագրություն) Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

***«Արևիկ Աբրահամյան Գրիգորի» ԱՁ***

Հասցե՝ ք. Երևան, Աթոյան 30/1

ՀՎՀՀ՝ 43841839

Հ/Հ՝ 1570027748167400

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ

**Ա. Աբրահամյան**

(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«21» «05» 2026թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 2
« 06 » « 04 » 2026թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-26/02-1» ծածկագրով պայմանագրի)

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | ընդամենը |
| 1 | 50311240/501 | պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ | | | | | | 1000000 | 1000000 | 1000000 | 1000000 | 2000000 | 2000000 | 2000000 | 2 000 000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

**Ղեկավար՝ Ն. Գալստյան**

(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
***«Արևիկ Աբրահամյան Գրիգորի» ԱՁ***
Հասցե՝ ք. Երևան, Աթոյան 30/1
ՀՎՀՀ՝ 43841839
Հ/Հ՝ 1570027748167400
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ

**Ա. Աբրահամյան**

(ստորագրություն)
Կ.Տ.